ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներ)

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2023 թ. իրականացրել է հետևյալ միջոցառումները:

1. Ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը

2023 թ. ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն են ստացել Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի,Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի մարզերի ծրագրում ընդգրկված 132 դպրոցի մանկավարժներ: Դպրոցների բաշխումն իրականացնելու համար համագործակցային աշխատանքներ են իրականացվել մարզպետարանների կրթության վարչությունների հետ:

2023թ. ծրագրի 1-ին փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2023 թ-ից «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիրը ներդրվել է նաև Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում՝ այսպիսով գործելով ՀՀ բոլոր մարզերում: 2023 թ-ից ծագիրը բարձր արդյունավետությամբ և հաջողությամբ ավարտվել և չի իրականացվում Երևան քաղաքում:
- Դպրոցների բաշխումն իրականացնելու նպատակով համագործակցային աշխատանքներ են իրականացվել Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի,Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզպետարանների կրթության վարչությունների հետ:
- Ծրագրում ընդգրկվել են 67 մենթոր: Այս փուլում ծրագրում համապատասխանաբար ընդգրկվել են 67 դպրոց, որոնցից 3-ը Արագածոտնի

մարզում, 7-ը Շիրակի մարզում, 6-ը Կոտայքի մարզում, 10-ը Գեղարքունիքի մարզում, 5-ը Արարատի մարզում, 4-ը Վայոց ձորի մարզում, 5-ը Արմավիրի մարզում, 3-ը Սյունիքի մարզում, 10-ը Լոռու մարզում, 14-ը՝ Տավուշում (գծ.1):



Գծապատկեր 1. Դպրոցների բաշխվածությունն ըստ մարզերի

- 2023 թվականին Ծրագրում ընդգրկվել են հետևյալ դպրոցները՝

✓ **Արագածոտնի մարզում՝** Կայքի մ/դ, Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան մ/դ, Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան մ/դ:

✓ **Շիրակի մարզում՝** Մեղրաշենի մ/դ, Գետափի մ/դ, Արևիկի մ/դ, Հովունի մ/դ, Կառնուտի մ/դ, Կամոյի մ/դ, Առափիի մ/դ:

✓ **Կոտայքի մարզում՝** Ողջաբերդի մ/դ, Քանաքեռավանի մ/դ, Բջնիի Հ. Թումանյանի անվան մ/դ, Նորգյուղի մ/դ, Ջառի Ժորա Սարգսյանի անվան մ/դ, Առինջի Կ. Ծառուկյանի անվան մ/դ:

✓ **Գեղարքունիքի մարզում՝** ք. Սևան N 4 հմ/դ, գ. Գանձակ N1 մ/դ, ք. Գավառ N 5 հմ/դ, գ. Ծաղկաշեն մ/դ, գ. Ջիլ մ/դ, գ. Սարուխան Հ. Խաչատրյանի անվան N 3 մ/դ, գ. Լճաշեն Ա. Տեր-Գրիգորյանի անվան մ/դ, գ. Ներքին Գետաշեն Ա. Եղիազարյանի անվան N2 մ/դ, գ. Նորաշեն հմ/դ, գ. Վարդենիկ Ա. Օհանյանի անվան N2 հմ/դ:

✓ **Արմավիրի մարզում՝** Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան մ/դ, Արմավիրի Մ.Սիլիկյանի անվան թիվ 6 հմ/դ, Արմավիրի Վարդան Բախշյանի անվան N2 հմ/դ, Վաղրշապատի Մ.Մաշտոցի անվան թիվ 1 հմ/դ, Վաղարշապատի Ջորավար Անդրանիկի անվան թիվ 12 հմ/դ:

✓ **Վայոց ձորի մարզում՝** Աղավնաձորի մ/դ, Վերնաշենի մ/դ, Շատինի մ/դ, Արփիի մ/դ:

- ✓ **Արարատի մարզում՝** Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան մ/դ, Վեդի քաղաքի Խ. Սողոմոնյանի անվան N 2 հմ/դ, Ոսկետափի Ս. Հովհաննիսյանի անվան հմ/դ, Վանաշենի մ/դ, Մրգավետի մ/դ:
- ✓ **Լոռու մարզում՝** Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան N3 հմ/դ, Բազումի մ/դ, Արջուտի մ/դ, Վանաձորի Պուշկինի անվան N4 հմ/դպրոց, Ազնվաձորի մ/դ, Վանաձորի ծովակալ Իսակովի անվան N23 հմ/դ, Դեբեդի մ/դ, Վանաձորի N8 հմ/դ, Գուգարքի N2 հմ/դ, Շահումյանի մ/դ:
- ✓ **Տավուշի մարզում՝** Իջևանի թիվ 5 հմ/դ, Իջևանի թիվ 4 հմ/դ, Իջևանի թիվ 3 հմ/դ, Նոյեմբերյանի թիվ 2 հմ/դ, Բերդավանի մ/դ, Կողբի թիվ 2 մ/դ, Այրումի մ/դ, Պտղավանի մ/դ, Հաղթանակի մ/դ, Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հմ/դ, Չինարի մ/դ, Արծվաբերդի հմ/դ, Արծվաբերդի մ/դ, Կողբի թիվ 1 մ/դ:
- ✓ **Սյունիքի Մարզում՝** *Կապանի թիվ 1 հմ/դ, Կապանի թիվ 6 հմ/դ, Սիսիանի հ.2 հմ/դ:*

- **2023 թվականի ծրագրի <u>երկրորդ փուլում</u>** Ծրագրում ընդգրկվել են 65 մենթոր: Այս փուլում ծրագրում համապատասխանաբար ընդգրկվել են 65 դպրոց, որոնցից 4-ը՝ Արագածոտնի մարզում, 7-ը՝ Շիրակի մարզում, 7-ը՝ Կոտայքի մարզում, 7-ը՝ Գեղարքունիքի մարզում, 4-ը՝ Արարատի մարզում, 5-ը՝ Վայոց ձորի մարզում, 6-ը՝ Արմավիրի մարզում, 5-ը՝ Սյունիքի մարզում, 10-ը Լոռու մարզում, 10-ը՝ Տավուշի մարզում (գծ.1):



Գծապատկեր 1. Դպրոցների բաշխվածությունն ըստ մարզերի

- 2023 թվականին Ծրագրում ընդգրկվել են հետևյալ դպրոցները՝

- ✓ **Արագածոտնի մարզում՝** Հարթավանի մ/դ, Նոր Երզնկայի մ/դ, Փարպիի Ղ. Փարպեցու անվան մ/դ, Ներքին Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան մ/դ:
- ✓ **Շիրակի մարզում՝** Սարատակի մ/դ, Լուսակերտի մ/դ, Կապսի մ/դ, Փոքրաշենի մ/դ, Գյումրու թիվ 7 հ/դ, Մուսայելյանի մ/դ, Շիրակի մ/դ:
- ✓ **Կոտայքի մարզում՝** Հացավանի մ/դ, Նոր Հաճնի թիվ 3 հ/դ, Արզականի մ/դ, Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան մ/դ, Կոտայքի Ս. Վարդանյանի անվան մ/դ, Գետարգելի մ/դ, Աղավնաձորի մ/դ:
- ✓ **Գեղարքունիքի մարզում՝** Ծովասարի Բ. Մուրադյանի անվան մ/դ, Ծաղկունքի մ/դ, ի Վարդաձորի մ/դ, Ծակքարի մ/դ, Դրախտիկի մ/դ, Աստղաձորի մ/դ, Չկալովկայի մ/դ:
- ✓ **Արմավիրի մարզում՝** Նորապատի մ/դ, Արմավիրի թիվ 9 հ/դ, Թաիրովի մ/դ, Ալաշկերտի Հրաչյա Քոչարի անվան մ/դ, Արգավանդի մ/դ, Վաղարշապատի Խ.Աբովյանի անվ. թիվ 4 հ/դ:
- ✓ **Վայոց ձորի մարզում՝** Ռինդի մ/դ, Արտաբույնքի մ/դ, Չիվայի մ/դ, Քարագլխի մ/դ, Վայքի հ/դ:
- ✓ **Արարատի մարզում՝** Դարակերտի Դավիթ Լաղոյանի անվան մ/դ, Արալեզի մ/դ, Նոր Ուղու մ/դ, Ջրահովիտի մ/դ:
- ✓ **Լոռու մարզում՝** Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հմ/դ, Վանաձորի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 25 հ/դ, Վանաձորի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 հ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Սպիտակի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան թիվ 1 հ/դ, Վանաձորի Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հ/դ, Ստեփանավանի թիվ 1 հ/դ, Վանաձորի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 15 /դ, Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հ/դ, Դարպասի մ/դ:
- ✓ **Տավուշի մարզում՝** Իջևանի թիվ 1 հ/դ, Գետահովիտի մ/դ, Ջորականի մ/դ, Բերդի թիվ 4 հ/դ, Նորաշենի Փաշո Ավագյանի անվան մ/դ, Ոսկեվանի մ/դ, Ջուջևանի մ/դ, Բագրատաշենի Մանգուլյանի անվան մ/դ, Բերդի թիվ 1 հ/դ, Բաղանիսի մ/դ:
- ✓ **Սյունիքի Մարզում՝** Կապանի թիվ 10 հ/դ, Կապանի թիվ 3 հ/դ, Սիսիանի թիվ 4 հմ/դ, Խոտի մ/դ, Մեղրիի թիվ1 հ/դ:

2. Վերապատրաստման դասընթացների անցկացում Ծրագրում ընդգրկված դպրոցներում

Ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման կարողությունների ուժեղացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ են անցկացվել ըստ ծրագրի հայեցակարգի մոդուլների: Ծրագրի շրջանակում իրականացվում է 140 ժամյա դասընթաց, որտեղ Ներկայացված բաժիններից 8-ը (110 ժամ տևողությամբ) ընդգրկված են պարտադիր ատեստավորման վերապատատրաստումների մոդուլում, իսկ 9 թեմա (30 ժամ տևողությամբ) Ծրագրի հիմնական թեմաներ են, որոնք ներկայացվում են Ծրագրի շրջանակներում և ապահովում են համընդհանուր ներառումը ուսումնադաստիարակչական գործընթացում:

Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակներում վերապատրաստում անցել են 2266 մանկավարժ:

- Առաջին փուլում վերապատրաստմանը մասնակցել են թվով **1216** ուսուցիչ և ուսուցչի օգնականներ:
- Երկրորդ փուլում վերապատրաստմանը մասնակցել են թվով **1050** ուսուցիչ և ուսուցչի օգնական:

3. Մենթորական աջակցության տրամադրում Ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականներին

Ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին շարունակական մենթորական աջակցության տրամադրվել հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ✓ Դասի համատեղ պլանավորում,
- ✓ Դասի պլանների համատեղ քննարկում և մեկնաբանում
- ✓ Դասալսումներ
- ✓ Դասի վերլուծություն
- ✓ Մասնագիտական քննարկումներ

2023 թվականին շարունակական մենթորական աջակցություն է ստացել և շարունակում է ստանալ թվով **2038** ուսուցիչ և ուսուցչի օգնական:

- Առաջին փուլում մենթորական աջակցություն են ստացել 1000 ուսուցիչ և ուսուցչի

օգնական

- Երկրորդ փուլում մենթորական աջակցություն են ստացել 1038 ուսուցիչ և ուսուցչի օգնական:

4. Ծրագրում նոր մենթորների ընդգրկում

- Պայմանավորված այն հանգմանքով, որ 2023 թ. առաջին եռամսյակի ընթացքում. Ծրագիրը ներդրվել է Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում, հետևաբար ընտրվել և տեսագործնական վերապատրաստում ու թեստավորում են անցել 28 մասնակից, որոնցից 27-ը ընդգրկվել են Ծրագրում որպես մենթոր:
- 2023 թ. սեպտեմբերին Սյունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում Ծրագրում ընդգրկվել են նոր դպրոցներ, հետևաբար ընտրվել և տեսագործնական վերապատրաստում ու թեստավորում են անցել 5 մասնակից, որոնցից 5-ն էլ ընդգրկվել են Ծրագրում որպես մենթոր:

Ընդհանուր առմամբ 2023 թ. ծրագրում ընդգրկվել են 32 նոր մենթոր:

5. Ծրագրի արդյունքների գնահատում և մշտադիտարկում

- Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է մշտադիտարկողների կողմից գնահատման մշտադիտարկման ընթացակարգի և գործիքակազմի համաձայն:
- 2023 թվականին Երևան քաղաքում ծրագրի դադարեցմամբ պայմանավորված՝ երեք մշտադիտարկող ավարտել են իրենց գործունեությունը ծարգրում: Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում ծրագրի ներդրմամբ ընդգրկվել են երկու նոր մշտադիտարկող, որի արդյունքում Ծրագրում ներգրավված են ընդհանուր 7 մշտադիտարկող:
- 2023 թ. սեպտեմբերին՝ Արմավիրի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի մշտադիտարկողի այլ աշխատանքի անցնելու հանգամանքով պայմանավորված, Ծրագրում ընդգրկվել է նոր մշտադիտարկող:

  Ծրագրում ներգրավված են ընդհանուր 7 մշտադիտարկող:
- Մշտադիտարկողների կողմից իրականացվել է մենթորների աշխատանքի ժամային գրաֆիկների վերահսկողություն, մենթորական աջացկություն ստացող ուսուցիչների հետ հետադարձ կապի ապահովում, վարչական աշխատակիցների, ուսուցիչների և երեխաների հետ ֆոկուս-խմբերի անցկացում, հետադարձ կապի գրավոր հարցաթերթերի արդյունքների հավաքագրում և մշակում, հարցազրույցներով, ֆոկուս խմբերով և գրավոր հարցումներով դուրս բերված

մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ամսական հաշվետվությունների տրամադրում:

- Ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են հանդիպումներ ՏՄԱԿ-ի մասնագետների հետ և մենթորներն ակտիվ մասնակցում են ՀՄԿ-ի կողմից կազմակերպվող և իրականացվող վերապատրաստումներին:

Կենտրոնի անվանումը՝ **«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ**

Տնօրեն՝ _____ **Լ. Մնացականյան**

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

05.10.2023թ.